

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ  
ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ՁՅՈՒՂՈ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

**Հարգելի մարդիկ**

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:  
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի  
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ  
ավելի ուշ:

**Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:**

1 **Քանի՞ հնարք կա գցումների տեխնիկայի մեջ: (1 միավոր)**

- 1) 76
- 2) 92
- 3) 67
- 4) 29

2 **Ըստ ձյուդոյի գործելակերպի կանոնների՝ նշվածներից ո՞րն է արգելված: (1 միավոր)**

- 1) կատարել նախաավարժանք մրցումների ժամանակ
- 2) ձեռքերը ուղիղ վիճակում պահել դեպի առաջ
- 3) մեջքով նստել դեպի գորգի կենտրոնը
- 4) մարզման ժամանակ բարևել ընկերոջը

3 **Նշվածներից ո՞րը ազդրի նստագցում հետ (ushiro- goshi) հնարքի կատարման եղանակ չէ: (1 միավոր)**

- 1) Եթե մրցակիցուր փորձում է աջով քայլ կատարել առաջ, ապա տորին, նրան հավասարակշռությունից դեպի առաջ և աջ հանելով, իսկանացնում է հնարքի կատարումը:
- 2) Գրկելով հարձակվողին՝ հնարքը կատարողը ոտքը բերում է առաջ և ձեռքերով նրան քաշում առաջ:
- 3) Ուկեն քայլ է կատարում դեպի առաջ այն պահին, երբ ինքը ոտքը կփորձի դնել գորգին:
- 4) Հնարքը կատարողը աշխատում է հավասարակշռություն պահպանել, մեջքը դարձնելով դեպի հետ՝ հավասարեցնել մրցակցի՝ ձեռքերով քաշելու ճիգի հզորությունը:

4 **Ձյուդոյի տեխնիկան նշվածներից ո՞րը իր մեջ չի ներառում՝ «կողոկանի» ժամանակակից դասակարգման հիման վրա: (1 միավոր)**

- 1) խեղդող և ցավեցնող հնարքներ
- 2) ցատկելու տեխնիկա
- 3) պահումների տեխնիկա
- 4) գցումների տեխնիկա

5 **Հայաստանի Հանրապետության նշված մրցավարներից ո՞վ միջազգային «Բ» կարգ չունի: (1 միավոր)**

- 1) Թելման Քոչարյանը
- 2) Ալեքսան Ավետիսյանը
- 3) Սերոբ Անդրեասյանը
- 4) Դավիթ Խիթարյանը

6 **Գոտենարտի ժամանակը վերահսկելու համար ինչպիսի՞ ժամացույց (վայրկյանաչափ) ունենալը անհրաժեշտ չէ: (1 միավոր)**

- 1) «ՕՍԱԵԿՈՄԻ» հնարքի տևողության
- 2) գոտենարտի տևողության
- 3) աշխատանքային տևողության
- 4) պահեստային

**7** Նշվածներից ո՞րն ձյուդոյում արգելված հնարք:

- 1) կողմնային տակակտրում ընկնելով
- 2) հակառակ շրջումով գցում՝ ազդրի վրա նստեցնելով
- 3) մրցակցին չորեքթաթ դիրքից բարձրացնել և գցել (նստեցումով)
- 4) գցում ազդրի վրա նստեցումով

**8** Ո՞րն է սպորտային մարզման նպատակային գլխավոր ուղղվածությունը: (1 միավոր)

- 1) շարժողական կարողությունների և հմտությունների ձևավորումը
- 2) բարձր մարզական արդյունքների նվաճումը
- 3) սպորտային տեխնիկայի ուսուցումը
- 4) պարասպորտի օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների բարձրացումը

**9** Նշվածներից ո՞րը ֆիզիկական պատրաստության խնդիրներից չէ: (1 միավոր)

- 1) շարժողական ընդունակությունների կատարելագործումը
- 2) կեցվածքի ձևավորումը
- 3) առողջության ամրապնդումը
- 4) մարմնակազմության ձևավորումը

**10** Մարզիկի համակողմանի զարգացումը պայմանավորող ո՞ր օրինաչափությունն է գլխավոր: (1 միավոր)

- 1) մարզական գործընթացի անընդհատությունը
- 2) բեռնվածության դինամիկայի ալիքաձևությունը
- 3) բարձր մարզական նվաճումների ուղղվածությունը
- 4) ընդհանուր և հատուկ պատրաստության միասնությունը

**11** Ըստ աշխատանքի մեջ ներգրավվող մկանախմբերի՝ տրվածներից ո՞րը բեռնվածության տեսակ չէ: (1 միավոր)

- 1) զանգվածային
- 2) համընդհանուր
- 3) չափավոր
- 4) տեղային

**12** Ո՞ր տեսակի վարժություններն են սպորտային մարզման գլխավոր միջոցները: (1 միավոր)

- 1) բազմատեսակ
- 2) օժանդակ
- 3) նմանողական
- 4) մոտեցնող

**13** Ճկունության դրսևորման քանի՞ ձև կա: (1 միավոր)

- 1) 4
- 2) 6
- 3) 8
- 4) 3

**14** Որո՞նք են տարեկան մարզման շրջանները: (1 միավոր)

- 1) նախապատրաստական, մրցակցական, անցման
- 2) ներգրավիչ, հիմնական, եզրափակիչ
- 3) նախնական, խորացված, կատարելագործման
- 4) սկզբնական, մասնագիտացված, ստուգողական

**15** Մարզական դասի (պարապմունքի) ո՞ր մասում են լուծվում գլխավոր խնդիրները: (1 միավոր)

- 1) նախապատրաստական
- 2) եզրափակիչ
- 3) ներգրավիչ
- 4) հիմնական

**16** Ո՞ր տարրերակում նշվածն է մարզական պարապմունքի տեսակ: (1 միավոր)

- 1) ուսումնամարզական
- 2) առողջարարական
- 3) ֆիզիկական
- 4) վերականգնիչ

**17** Ինչո՞վ է որոշվում մարզավիճակը: (1 միավոր)

- 1) ֆիզիկական պատրաստությամբ
- 2) նվաճումների համար օպտիմալ պատրաստությամբ
- 3) տեխնիկական պատրաստությամբ
- 4) տակտիկական ընդունակությունների կատարելագործմամբ

**18** Մարզման ո՞ր շրջանին է առավելապես բնորոշ ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստությունը: (1 միավոր)

- 1) անցման
- 2) նախամրցակցական
- 3) մրցակցական
- 4) նախապատրաստական

**19** Նշվածներից ո՞րը մարզական պարապմունքի մաս չէ: (1 միավոր)

- 1) եզրափակիչ
- 2) վերականգնողական
- 3) ներգրավիչ-նախապատրաստական
- 4) հիմնական

**20** Որո՞նք են նախապատրաստական շրջանի փուլերը: (1 միավոր)

- 1) տեսական և գործնական
- 2) նախնական և խորացված
- 3) հիմնական և ստուգողական
- 4) ընդհանուր և հատուկ

**21** Ո՞րն է արագաշարժության մշակման հիմնական մեթոդը: (1 միավոր)

- 1) շրջանաձևը
- 2) կրոսայինը
- 3) հավասարաչափը
- 4) կրկնողականը

**22** Ո՞ր վարժություններն են ճկունության մշակման հիմնական միջոցները: (1 միավոր)

- 1) կոորդինացիայի
- 2) ուժային
- 3) դիմացկունության
- 4) ձգողական

**23** Ո՞րը մարզական պլանավորման հիմնական ձև է: (1 միավոր)

- 1) տարեկանը
- 2) ընթացիկը
- 3) կիսամյակայինը
- 4) հեռանկարայինը

**24** Ո՞ր տարբերակում նշվածներն են տակտիկայի ձևեր: (1 միավոր)

- 1) անհատական և թիմային
- 2) հարձակողական և պաշտպանողական
- 3) ընդհանուր և հատուկ
- 4) խաղային և խմբային

**25** Ո՞րն է մարզման նախապատրաստական շրջանի հիմնական խնդիրներից: (1 միավոր)

- 1) տակտիկական պատրաստության ապահովումը
- 2) մարզավիճակի ձեռքբերումը
- 3) ֆիզիկական ներուժի վերականգնումը
- 4) մակրոցիկլի նախապատրաստումը

**26** Ո՞րը մարզման մրցակցական շրջանի խնդիրներից է: (1 միավոր)

- 1) մարզավիճակի կատարելագործումը
- 2) մարզական բարձր արդյունքների ցուցաբերումը
- 3) մարզավիճակի պահպանումը
- 4) շարժողական ընդունակությունների մշակումը

**27** Որո՞նք են մարզման անցման շրջանի հիմնական խնդիրները: (1 միավոր)

- 1) հատուկ պատրաստվածության մակարդակի բարձրացումը և բարձր արդյունքների նվաճումը
- 2) շարժողական ընդունակությունների մշակումը, շարժողական կարողությունների և հմտությունների ձևավորումը
- 3) պատրաստության բոլոր կողմերի մակարդակի բարձրացումը
- 4) մրցումներից հետո հանգստի ապահովումը, ուժերի վերականգնումը և աշխատունակության պահպանումը

28

Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն հատկանիշների համարները, որոնք պետք է հաշվի առնվեն հակառակորդին հոգեբանորեն բնութագրելու համար: (1 միավոր)

1. հուզական վիճակների դրսևորման խորությունը և տևականությունը
2. գործողությունների անկանխատեսելիությունը
3. մրցման ընթացքում անակնկալ արգելքների հանդիպման հատուկ պատրաստվածություն ունենալը
4. մինչև վերջ պայքարելու ակտիվ ձգտում ունենալը

- 1) 2 և 3
- 2) 3 և 4
- 3) 1 և 3
- 4) 1 և 4

29

Ո՞րն է համարվում մրցումային գործունեության խթան (մոտիվացիա): (1 միավոր)

- 1) մարզման արդյունքները ստուգելը
- 2) հաղթելու ձգտումը
- 3) պատասխանատվությունը
- 4) մարզիչի հույսերը, ակնկալիքները արդարացնելու ցանկությունը

30

Ի՞նչը սպորտային պայմաններում հույզերի բնութագրերից չէ: (1 միավոր)

- 1) տվյալ մրցումներին մասնակցելու ոգևորվածությունը
- 2) դժվարին նպատակին հասնելու համար սպորտային ղեկավարելի ագրեսիան
- 3) մարտական ոգեշնչումը
- 4) հարմարվողականությունը

31

Տրվածներից 3-ը ձյուդո մարզաձևի բարոյական կողերքներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. Ձյուդոն ինքնակառավարման և իրավական կողերքներ է փոխանցում մարզիկներին:
2. Ձյուդոն միակողմանի զարգացման միջոց է:
3. Ձյուդոն նպաստում է մարզադպրոցներում փիլիսոփայական գաղափարների ներդրմանը:
4. Ձյուդոն տալիս է առանց զենքի ինքնապաշտպանության հնարավորություն:
5. Ձյուդոն առօրյա ապրելակերպի փիլիսոփայություն է:
6. Ձյուդոյի միջոցով ապահովվում է սամուրայների էթիկայի պահպանումը և բնավորության դաստիարակումը:
7. Ձյուդոն դաստիարակում է ֆիզիկական ուժ և մեծահոգություն:

32

Տրվածներից 3-ը բազային շարժողական ընդունակություններ չեն: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. ռիթմայնությունը
2. ճարակությունը
3. արագաշարժությունը
4. ցատկունակությունը
5. հավասարակշռությունը
6. դիմացկունությունը
7. ճկունությունը

33

**Տրվածներից 3-ը այն սկզբունքներն են, որոնց հիման վրա իրականացվում է մրցումների համակարգը: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. ուժեղագույների բացահայտում
2. մարզիկների կամային հատկանիշների զարգացում
3. մրցումների օրացույցի կայունություն
4. մասսայական սպորտի զարգացում
5. մրցումների օրացույցի փուլային կառուցում
6. մարզաշրջանների հաշվառում
7. մրցակցական բեռնվածության տարիքային հաջորդականության պահպանում

34

**Նախապարժանքի բովանդակության, տևողության և ֆիզիկական վարժությունների համալիրի ընտրությունը պայմանավորված է տրվածներից 3-ով: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. տվյալ մարզաձևի առանձնահատկություններով
2. ծրագրի պահանջներով
3. մարզիկի պատրաստության աստիճանով
4. տարիքային առանձնահատկություններով
5. մարզման խնդիրներով
6. անցկացման վայրով
7. մարզաշրջանով

35

**Տրվածներից 3-ը արագաշարժության ընդունակության մշակման հիմնական մեթոդներից են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. խաղային
2. ամբողջական
3. կրկնողական
4. ածանցված
5. հավասարաչափ
6. մրցակցային
7. անընդհատ

36

**Տրվածներից 3-ը անհրաժեշտ է իմանալ՝ տակտիկական գործողություններ կատարելու համար: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. հակառակորդի առանձնահատկությունները
2. հակառակորդի տակտիկական գործողությունների զինանոցը
3. ուժեղագույն մարզիկների տակտիկայի փորձը
4. ընտրած մարզաձևի տակտիկայի առանձնահատկությունները
5. մարզաձևի տակտիկայում կիրառվող նորարարությունները
6. առաջիկա մրցումների պայմաններն ու կանոնադրությունը
7. բազմազան տակտիկական եղանակներ

37

**Տրվածներից 3-ը այն սկզբունքներն են, որոնք նպաստում են ապագա մարզիկի ուսումնամարզական մակարդակի բարձրացմանը: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. ինքնադիտումը
2. սթրեսակայունության զարգացումը
3. տրվող առաջադրանքների մատչելիությունը
4. անհատական առանձնահատկությունները գիտակցել տալը
5. ուսուցումը գործնական կյանքի հետ կապելը
6. նպատակաուղղելը դեպի բարձր արդյունքները
7. ծանոթացումը այլ մարզաձևերի առանձնահատկություններին

38

**Տրված հատկանիշներից 3-ով բնութագրվում է բարձր մարզվածության վիճակը: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. արգելադիմացկանության ընդունակություն
2. գերմարզվածության դրսևորում
3. առաջիկա մրցմանը համապատասխան հուզական վիճակի առկայություն
4. հոգեկան գործընթացների արտակարգ արագ ընթացք
5. ուշադրություն՝ լայնացված ծավալով
6. իր ուժերի նկատմամբ վստահություն
7. մասնագիտական ընթրնման բարձր մակարդակ